

# ՄԱՏՁԵԼԻ ՄԻՋԱՎԱՅՐ ԱՌԱՆՁՆԱՀԱՏՈՒԿ ԿԱՐԻՔՆԵՐ ՈՒՆԵՑՈՂ ԱՆՁԱՆՑ ՀԱՄԱՐ


Զեկուցող՝ Ռ.Զաքարյան

Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի  
սոցիալական ապահովության վարչության պետ

Մայրաքաղաքի համար սոցիալական ոլորտի ամենասուր պրոբլեմներից են հաշմանդամություն ունեցող անձանց՝ հասարակական կյանքին լիարժեք ինտեգրման խնդիրները: Հայաստանը որպես հետխորհրդային պետություն, այս առումով, ծանր ժառանգություն է ստացել: Խորհրդային ժամանակաշրջանում հաշմանդամություն ունեցող անձանց հիմնախնդիրներով խորապես չեն զբաղվել, և այդ իսկ պատճառով նշված ժամանակահատվածում կառուցված փողոցներում, անցումներում, բնակելի և սոցիալական, հասարակական նշանակություն ունեցող շենք-շինություններում պարզապես անտեսվել են նրանց կարիքները, չեն եղել թեքահարթակներ, ընդհանրապես չի խոսվել տրանսպորտային մատչելիության կամ վերելակային հարմարավետության մասին: Որպես օրինակ նշենք Հայաստանի կույրերի միավորման քառահարկ վարչական շենքը, որը իրենց իսկ կողմից է կառուցված և ոչ մի առումով հարմարեցված չէ տեսողության խնդիրներ ունեցող անձանց համար: Այսպիսի օրինակներ կարելի է շատ բերել:

Երևանում այսօր հաշվառված են 61 325՝ տարբեր խմբերի հաշմանդամություն ունեցող անձինք, որոնցից 2327-ը՝ երեխաներ են: Ընդհանուր թվից 34 175-ը աշխատանքային տարիքի են:

*Երևանում այսօր հաշվառված են 61325 հաշմանդամություն ունեցող անձինք*



Չնայած վերջին տարիներին հաշմանդամություն ունեցող անձանց կենսագործունեության համար անարգել միջավայրի ձևավորմանն ուղղված պետական, համայնքային, ինչպես նաև ոչ պետական սեկտորի կողմից իրականացված միջոցառումներին՝ իրավիճակը մայրաքաղաքում մնում է անբավարար: Այդ պատճառով քաղաքապետարանը մշակել է իրավիճակի արմատական և աստիճանական բարելավման ծրագիր, որը նախատեսում է մինչև 2025 թվականը լայնամասշտաբ միջոցառումների իրականացմամբ հասնել քաղաքաշինական, ինժեներական ենթակառուցվածքի, տրանսպորտային, առողջապահական, կրթական, մշակութային, սպորտային, սոցիալական ենթակառուցվածքի հիմնարկների հիմնական մատչելիությանը և հաշմանդամություն ունեցող անձանց ակտիվ կենսագործունեության համար բարենպաստ միջավայրի ձևավորմանը: Նպատակին հնարավոր է հասնել պլանավորած և հետևողական աշխատանքի շնորհիվ՝ քաղաքային իշխանությունների, հասարակական սեկտորի և գործարար շրջանակների համագործակցությամբ:

Արդեն կատարված, ընթացիկ և պլանավորված աշխատանքները կարելի է բաժանել 3 հիմնական խմբերի.

**ՏԵՂԱՇԱՐԺՄԱՆ ՍԱՀՄԱՆԱՓՈՒՄ ՈՒՆԵՑՈՂ ՄԱՐԴԻԿ**

**ԽՈՍՔԻ ԵՎ ԼՍՈՂՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱՓՈՒՄ ՈՒՆԵՑՈՂ ՄԱՐԴԻԿ**

**ՏԵՍՈՂՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱՓՈՒՄ ՈՒՆԵՑՈՂ ՄԱՐԴԻԿ**



Վերջին տարիներին քաղաքաշինական ծրագրերում հաշվի են առնվել մատչելիության խնդիրները, և կառուցվել են բազմաթիվ թեքահարթակներ: 2013 թ.-ին Երևան քաղաքի համայնքային բյուջեով առաջին անգամ նախատեսվել էին գումարներ այդ նպատակի համար: Այդ գումարները էականորեն աճելու են հաջորդ տարիների բյուջեներում: Այս գործընթացներին մասնակցում են քաղաքապետարանի հետ համագործակցող մի շարք ՀԿ-ներ, որոնց կողմից էլ տրվում է կատարված աշխատանքների վերջնական գնահատականը: 2013 թ.-ին ընտրված հասցեներում կառուցվեցին նորմերին համապատասխան 81 թեքահարթակներ, մայթերի և փողոցների հիմնանորոգումների արդյունքում՝ շուրջ 290 թեքահարթակներ կամ հարմարեցումներ: Հասարակական հանգստի նոր կառուցված չորս գոտիներ /այգիներ/ ամբողջովին հարմարեցվեցին հաշմանդամություն ունեցող անձանց կարիքներին:

2014 թ.-ին Երևանի համայնքային բյուջեով նախատեսված միջոցների շրջանակում թեքահարթակների կառուցման համար ՀԿ-ների հետ ընտրվել և հաստատվել են շուրջ 200 այն առաջնային հասցեները, որտեղ հնարավոր է այդ գումարի սահմաններում թեքահարթակների կառուցումը, նաև՝ մայթերի և փողոցների հիմնանորոգումների ընթացքում: Անհրաժեշտ է շեշտել, որ այդ աշխատանքներն իրականացվում են ոչ միայն Կենտրոնում, այլ նաև համաչափ

զարգացման սկզբունքով՝ մյուս վարչական շրջաններում ևս: Նույն 2014 թ.-ին քաղաքապետարան-մասնավոր հատված համագործակցությամբ ձեռնարկված ուսումնասիրության արդյունքում դիտարկվել է, որ նախկինում արդեն կառուցված հանրային օբյեկտների դիմաց շուրջ 500 հասցեներում հնարավոր է կառուցել նորմերին համապատասխան թեքահարթակներ, և այդ նպատակով բոլոր կառույցներին քաղաքապետարանի կողմից տրամադրվել են անվճար նախագծեր:

Տարիներով կուտակված լրջագույն խնդիրներից են նաև սոցիալական ծառայություններ տրամադրող կազմակերպությունների, մշակութային, կրթական, առողջապահական հաստատությունների մատչելիության խնդիրները: 2013 թ.-ին Երևանի թվով հինգ վարչական շրջաններում ստեղծվեցին ինտեգրված սոցիալական ծառայությունների համալիր կենտրոններ՝ տվյալ վարչական շրջանում սոցիալական ծառայություններ տրամադրող չորս կազմակերպությունների մեկտեղման սկզբունքով, որոնք ժամանակակից ստանդարտներով ամբողջապես հարմարեցված են հաշմանդամություն ունեցող անձանց ոչ միայն ֆիզիկական մատչելիության, այլ նաև ծառայություններից օգտվելու նկատառումով: Առաջիկա մի քանի տարիների ընթացքում համալիր կենտրոններ կստեղծվեն նաև մնացյալ յոթ վարչական շրջաններում ևս:

Քաղաքային իշխանության հետևողականության արդյունքում զգալի աշխատանքներ են կատարվել նաև քաղաքապետարանի ենթակայության առողջապահական, կրթական, մշակութային հաստատությունների մատչելիության առումով: Այսպես օրինակ՝ առողջապահական հաստատությունների մուտքի հատվածում հիմնականում առկա են թեքահարթակներ, գրեթե բոլոր լաբորատոր սենյակները գտնվում են առաջին հարկերում, որտեղ նախատեսվում է նաև առանձնահատուկ կարիքներ ունեցող անձանց համար հարմարեցված սենյակների կահավորում, ինչպես նաև այն պոլիկլինիկաներում, որտեղ առկա են նորմերին չհամապատասխանող թեքահարթակներ, դրանց վերակառուցում և համապատասխանեցում:



Անցանելիության և մատչելիության խնդիրները չեն լուծվում, իհարկե, միայն թեքահարթակների կամ հարմարեցումների կառուցմամբ: Խնդիրը ոչ միայն անարգել շենք մուտք գործելու մեջ է, այլ կառույցից առանձնահատուկ կարիքներ ունցող անձանց ինքնուրույն լիարժեք օգտվելու ապահովումն է: Այս առումով աշխարհի առաջատար երկրներում կիրառվում է վերելակային տնտեսությունը՝ համապատասխանեցված շենքերի օգտագործմանը:

Այսպես, օրինակ, կրթօջախները՝ որպես խորհրդային տարիների ժառանգություն, ունեն բազմաթիվ խոչընդոտներ տվյալ երեխաների՝ դպրոցի ներսում ազատ շարժի ապահովման առումով, քանի որ միջհարկային աստիճանավանդակների նեղության և մեծ անկյան պատճառով խնդիրը կարող է միայն լուծվել հատուկ վերելակների տեղադրման միջոցով: Որպես խնդրի նախնական լուծում ենք տեսնում յուրաքանչյուր վարչական շրջանում մեկական՝ նշված տարբերակով դպրոցների ամբողջական հարմարեցումը, քանի որ միայն մուտքերի թեքահարթակներով համարել դպրոցը մատչելի, ճիշտ չէ: Նմանատիպ խնդիրներ ունեն նաև մշակութային օջախները և մինչև 2025 թվականը իրականացվելու են աշխատանքներ՝ նշված հաստատությունների մատչելիության ապահովման ուղղությամբ:



Մայրաքաղաքի համար կարևորագույն խնդիր է նաև վերգետնյա և ստորգետնյա անցումների մատչելիությունը հաշմանդամություն ունեցող անձանց և բնակչության սակավաշարժ խմբերի համար: Արդեն իսկ կառուցված վերգետնյա անցումներից օգտվելու դեպքում վերելակների կցակառուցումը, իսկ ստորգետնյա անցումների դեպքում՝ թեքահարթակների վերակառուցումը նորմերին համապատասխան, կամ հենապատերի երկայնքով վերելակների կառուցումը, հանդիսանում է խնդրի լուծման օպտիմալ տարբերակ: /Առաջին քայլն այս ուղղությամբ արդեն ձեռնարկված է՝ Աբովյան-Իսահակյան երկհարկանի ստորգետնյա անցում-առևտրի կենտրոնի վերակառուցման նախագծում հատուկ մաս է մշակված սայլակավոր հաշմանդամների անցանելիության ապահովման համար: Այդ թվում՝ շարժման և ելումուտի ապահովման ուղղաձիգ կապերի /վերելակ/ և ամբարձիչ թեքային հարթակների տեղադրում/:



Նմանատիպ վերելակների տեղադրումը կարելի է կազմակերպել նաև բնակելի և հասարակական օգտագործման շենքերում, որը և կապահովի հարկերով անխոչընդոտ տեղաշարժը: Այս առումով կան կատարելիք հսկայական աշխատանքներ, որոնք մեր կողմից կատարվելու են այնքան ժամանակ, քանի դեռ զգացվելու է դրա անհրաժեշտությունը:

Տրանսպորտային մատչելիությունը մեզ համար մնում է որպես առարկայական պրոբլեմներից մեկը: Այս ոլորտում քաղաքային իշխանության տեսլականն է անվճար ավտոկայանատեղերի, ավտոբուսային և տրոլեյբուսային տնտեսության հարմարեցումը բնակչության սակավաշարժ խմբերին:

2014 թվականին անվճար ավտոկայանատեղերի խնդիրը իրավական առումով լուծելի ենք դարձրել /տեխնիկական առումով լուծման ընթացքում է/. այսինքն՝ առաջին և երկրորդ խմբի հաշմանդամություն ունեցող անձանց կողմից վարվող կամ այդ անձանց տեղափոխող ավտոտրանսպորտային միջոցների կայանման համար մայրաքաղաքի վճարովի ավտոկայանատեղիներում առանձնացվել, նշագծվել և կահավորվել են հատուկ տարածքներ: Այդ կայանատեղիների ընտրության սկզբունքն այն է՝ որ եթե տվյալ կանգառի հաստիքում հնարավոր է երեքից ավելի մեքենա կայանել, ապա մեկից կարող են օգտվել միայն համապատասխան թույլտվությունը ունեցող անձիք: Եվ առանձնահատուկ կարիք ունեցող բոլոր այն անձիք, որոնք դիմում են քաղաքապետարան, նրանց տրվում են անվճար թույլտվություն և տարբերանշան՝ արտոնյալ կարգով անվճար կայանելու համար:

Մայրաքաղաքի ավտոբուսային ցանցի 68 ավտոբուսային երթուղիներից, ցավոք, մինչ այժմ ոչ մի ավտոբուս հարմարեցված չի եղել և միայն 2014 թ.-ին համայնքային բյուջեում նախատեսված միջոցների հաշվին մինչև տարեվերջ թվով 10 ավտոբուսներում կտեղադրվեն չափորոշիչներին համապատասխան վերելակներ, և այդ տեղեկնցն իր շարունակությունը կունենա առաջիկա տարիներին նույնպես:

Ինչ վերաբերում է տրոլեյբուսներին, ապա ընդհանուր տրոլեյբուսային ցանցից /5-երթուղի 60 տրոլեյբուսներով/ ներկայումս ունենք գործող երկու հարմարեցված տրոլեյբուսներ, և այստեղ դարձյալ խնդրի լուծումը տեսնում ենք տրանսպորտային ընդհանուր բարեփոխումների համատեքտում:



Տրանսպորտային մատչելիության ապահովման ուղղությամբ տեսողության և լսողության խնդիրներ ունեցող անձանց համար ևս կձեռնարկվեն համապատասխան քայլեր.

- լսողության խնդիրներ ունեցողների համար հասարակական տրանսպորտում կտեղադրվեն կանգառների անվանումները ներկայացնող լուսատիպային էկրաններ: Այդ էկրանները կտեղադրվեն այնպես, որ տրանսպորտի ցանկացած կետից կարողանան տեսնել լուսատախտակի վրա տեղադրված տեղեկատվությունը ներկայիս կամ հաջորդ կայարանի վերաբերյալ:
- 2014 թվականի ընթացքում թվով 100 ավտոբուսներում (հետին դռան մոտ) տեղադրվել են ավտոբուսի կանգառման անհրաժեշտության մասին նախազգուշացման սեղմվող կոճակներ՝ նախատեսված խոսքի սահմանափակում ունեցող մարդկանց համար:
- Իսկ տեսողության սահմանափակում ունեցող մարդկանց համար հասարակական տրանսպորտում նախատեսվում է տեղադրել լուսաձայնային սարքեր, որոնք քաղաքացիներին հնարավորություն կտան տեղեկանալու իրենց ներկայիս տեղի և հաջորդ կանգառի մասին:

Արդեն թվով 36 լուսացույցային խաչմերուկներում տեսողության խնդիրներ ունեցող մարդկանց համար տեղադրվել են հատուկ ձայնային ազդանշաններ: Իսկ մինչև 2025 թվականը նման ազդանշանային միջոցներ կտեղադրվեն անհրաժեշտ խաչմերուկներում:

Բոլոր մայթանցումների և խաչմերուկների մոտ կներկառուցվեն հատուկ գոգավոր ծածկ ունեցող հատվածներ, որոնց հասնելիս տեսողական խնդիր ունեցող անձը կհասկանա, որ հասել է անցմանը: Հետագայում բոլոր մայթերում ուղղաձիգ նման ծածկույթներ կլինեն, որով քայլելն ավելի կհեշտացնի նման խնդիրներով մարդկանց ինքնուրույն տեղաշարժը:



Խոսքի և լսողության սահմանափակում ունեցող մարդկանց համար նախատեսվում է ստեղծել տեսահաղորդակցման հնարավորությամբ տեղեկատվական կենտրոն: Կենտրոնը հնարավորություն կտա խուլ ու համր մարդկանց տեսահեռախոսների միջոցով ժեստերի լեզվով հաղորդակցվել և օգնություն ստանալ շուրջօրյա գործող ծառայությունից: Կենտրոնի միջոցով առանձնահատուկ կարիքներ ունեցող անձինք անհարժեշտության դեպքում կկարողանան ահազանգել առաջին օգնության ծառայություններին: Նրանք կարող են կենտրոնից ստանալ նաև տեղեկատվություն իրենց գտնվելու վայրի, ինչպես նաև այն հատվածի մասին, ուր ցանկանում են հասնել:

Բնականաբար կենտրոնի տեղեկատվական բազայում ներառվելու է առանձնահատուկ խնդիրներ ունեցող անձանց անհրաժեշտ յուրահատուկ տեղեկատվություն, որը կազմվելու է համապատասխան խնդիրներով զբաղվող հասարակական կազմակերպությունների հետ ու մշտապես թարմացվելու է: Նախատեսվում է նաև սոցիալապես անապահով խուլ ու համր մարդկանց տրամադրել տեսահաղորդակցման հնարավորությամբ սարքեր՝ կառավարման կենտրոն կապվելու համար:



Վերը նշված բոլոր ծրագրերը քաղաքապետարանի, հասարակական կազմակերպությունների և մասնավոր հատվածի ներդաշնակ համագործակցությամբ իրագործվելու են քայլ առ քայլ, ինչպես համայնքային բյուջեի, այնպես էլ ներդրումային ծրագրերի շրջանակներում: Նախանշված այս աշխատանքների իրագործման արդյունավետությունը գնահատվելու է առանձնահատուկ կարիքներ ունեցող անձանց՝ մասնավորապես սակավաշարժ խմբերի՝ կրթական, առողջապահական, սոցիալական և մշակութային հաստատությունների, տրանսպորտային և ինժեներական ենթակառուցվածքների անարգել հասանելիությամբ, և, որ ամենակարևորն է, հաղթահարվելու է առանձնահատուկ կարիքներ ունեցող անձանց սոցիալական մեկուսացումը, արձանագրվելու է հասարակության մեջ սոցիալական լարվածության թուլացում և սոցիալական արդյունավետության բարձրացում: